տում է իւրաքանչիւր տարի 2—3 մարդ: Աղա-  
բաբեան գաւառական ուսումնարանում հայ ա-  
շակերտների թիւը հասնում է 70-ի (այստեղ  
բոլոր աւարկաները ուսուցին են սովորեցնում):  
Մնում է հայոց դպրոցը, որի մէջ աշակերտների  
թիւը 20-ի է հասնում:

Ուսումն գործը այդպիսի դրութեան մէջ էր,  
մինչև այստեղ առաջնորդ եկաւ խորէն Ստեփա-  
նէն: Նա վճռեց բանալ այստեղ տղայոց հոգևոր  
դպրոց, ուր կարող լինէին ամբողջ թիւից հա-  
ւաքվել աշակերտներ—Աղբաբեց, Մօզզովից, Ար-  
մախից, Ստարոպօլից և այլն Աստրախան, և  
այստեղ ուսում առնել: Այդ հարցը տեսականա-  
պէս վճռվել էր, երբ խորէն ետիկոսյանը հե-  
ռացաւ այստեղից և նրա տեղը նշանակվեց ա-  
ռաջնորդ Արիտակէս արքեպիսկոպոս Անդրա-  
կան, որը անցեալ դեկտեմբեր ամսին հրաւի-  
րեց առաջնորդարան մօտ 150 մարդ հայերից՝  
խօսելու ուսումնարանը բանալու հարցի մասին:  
Ընդամենը հաւաքվել էին մօտ 50 մարդ: Սրա-  
զանք բանալով ժողովը՝ բացատրեց ուսումնա-  
րանի նշանակութիւնը, նրա կարեւորութիւնը  
Աստրախանի թիւի համար, և վերջը առաջար-  
կեց հանգամանկութիւն բանալ փող ժողովուր-  
համար: Ներկայ գտնվող անդամները այնքան  
բիշ էին, որ ամենքն էլ հաւատացած էին, թէ  
հանգամանկութիւնը աշտուրութիւն չի ունենայ,  
բայց երբ հարցը հասաւ փող հաւաքելուն, մենք  
զարմացմամբ տեսներ, թէ ինչ հնորայի և ա-  
ռաւատահուն ժողովուրդ են Աստրախանի բնակիչ-  
ները: Այդ երեկոյ 47 մարդկանց մէջ հաւաքվեց  
մօտ 17 հազար բուրբի: Հին նոյն երկրոյ ընար-  
վեց յանձնաժողով վեց հոգուց, որը պէտք է  
շարունակէ փող ժողովը: Թէև յանձնաժողովը  
դեռ չէ սկսել իր գործունէութիւնը, բայց մինչև

այժմ ժողովրդից առանձին անդամներ կամեցել  
են աւելացնել այդ դումարի վրա իրանց սուրբը,  
և այժմ փողի գումարը 30 հազար բուրբուց ան-  
ցել է: Յոյս կայ, որ 50 հազար բուրբուց աւելի  
հաւաքվի: Արդէն սկսված է տուն շինելու գոր-  
ծը: Շինութիւնը պէտք է լինի Պօղոս և Պետրոս  
եկեղեցու մօտ, մի ընդարձակ 50 սառնի գետ-  
նի վրա: Գլխաւորը միայն ուսումնարանի շէնքն  
է, որովհետև թեմից տարեկան 15 հազար բուրբ  
եկամուտ կայ, որ պէտք է գործածվի բացվել  
ուսումնարանի պիտոյքի համար:

Մ. Ա.

ՆԱՄԱԿ ԱՐՄԱԽԻՒՅՑ

Փետրվարի 10-ին

Եթէ ուղում էք ամբողջ կովկասում գտնել մի  
կենարօն, որտեղ 6—7 հազար ապահովված հա-  
յեր են ապրում, որտեղ սակայն 15—20 հողի  
միայն հայերէն կարող գիտեն, իսկ զբանցից  
հազիւ 10 հողի են, որ կարող են,—զրա  
համար հարկաւոր է Արմախի գալ:

Սա միակ տեղն է, ուր ստաղարական խօսքը ոչ  
մուտք և ոչ էլ աղբեցութիւն ունի հասարակու-  
թեան վրա: Եթէ կողքէ իմանալ՝ ոչ մի բան աղ-  
բեցութիւն չունի, բացի փողից: Մամուսն  
կուրք դարձրած՝ պաշտում է. դրան խնկար-  
կում են, դրա հօր պատգամներին հնազան-  
դում:

Իսկ Բարեգործական ընկերութեան տեղական  
ճիւղը իր 190—200 անդամներով իր հազարնե-  
րին հասնող եկամուտներով—գուցէ կը նկատեն  
մեզ: Բայց հեռուից միթէրական այդ փաստը  
կորցնում է իր փայլը, երբ մօտիկից են դիտում:  
Անցեալներում, մէկ օտարական, որը երկար  
տարիներ Արմախիումն է վերաբնակվել, ատու՝  
էր մեզ. էլ երբ այստեղ խօսվում էր Բարեգործա-  
կան ընկերութեան ճիւղը բանալու մասին, իւ-  
րաքանչիւր սուտարական ցանկանում էր ան-  
պատճառ անգամ գրվել: Գիտե՞ք ինչու. զբանցից  
իւրաքանչիւրը, չը գիտեմ որտեղից լսելով հա-  
մոզված էր, որ ինքը 5 բուրբի տալով՝ որ և է  
տեղից պարգև կը ստանայ, և մի այնպիսի պար-  
գև, որը կօշիկ նրան աւելի աղոթութեամբ փող  
վատակել: Բայց երբ բոլորի յոյսերն իրար  
անցան՝ անդամակցութիւնը կանգ առաւ:

Ի զէպ. ինչ եղաւ այն մասնաժողովը, որ  
ընտրվեց անցեալ դեկտեմբերի ընդհանուր ժո-  
ղովում: Գա ընտրվեց աղքատներին, գաղթա-  
կաններին խնամելու, նրանց պատասպարելու  
նպատակով: Ինչ գործեց մասնաժողովը իր 6—7  
անդամներով, ժողովեցին, ծրագիր կազմեցին,  
թէ ամբողջ մեզըրը զցելով այս կամ այն անհատ  
վրա, ամեն բան մտաւորութեան մասնցին: Այս  
վերջինը ամենից ճիշդն է երևում, որովհետև ոչ  
մի չքաւոր չը միթէրակցի, իսկ մի քանի օր  
առաջ մէջից մի հայ կին, իր երկու վերաւորված  
հիւանդ զաւակներով տունէ տուն էր ման  
գալիս և արտասուք թափելով հաց էր մտրում...

Մ—մ

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՈՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 1-ին

«Արձագանք» լրագրի նախը բարեհաճել  
էր իմ նամակս, որ տպված էր «Մշակի» նախըն-  
թաց համարում, կուղի զբախ սոսու թիւն, և  
ինձանից «Լուսնար» խնդրում էր ցոյց տալ,  
թէ հայուի որ տեղում, որ անդամի խօս-  
քերի մէջ թիւլ է տրված յեղաշրջումներ և ա-  
ղաւորումներ:

Ահա յայտնում եմ ձեզ, որ ոչ միայն ձեր  
ցանկացածը, այլ և իմ նամակի միւս կէտերն  
ես—թէ ձեր տպած հայուի օրյակով պատկեր  
չէ, և գունաւորված է անձական համակրու-  
թեան և հակակրութեան զգացմունքով—պատ-  
րաստ եմ մի առ մի սպասուցանել, բայց մի  
պայմանով, որ իմ պատասխանը ստաղովի «Ար-  
ձագանքի» էջերում, որպէս զի ձեր ընթերցող-  
ները միջոց օժնեան բաղաւաղու ձեր տպած  
հայուի իմ տալիք բացատրութեան հետ և կար-  
դանան համոզվել, թէ ով է մեզանից զբախուր:  
Ուստի սպասում եմ որ դուք յայտարարեք, թէ  
յանձն էք առնում իմ պատասխանն ան փո-  
փոխ ստաղովի «Արձագանքում», օրից յետոյ  
ես իսկոյն կը կատարեմ ձեր խնդրը, և կու-  
ղարկեմ ձեզ իմ պատասխանը:

Գուր մի քերական էլ էր սպել... Վաղ օրինակները բարձրագույնից խոսելն, ասում էր, անվայել է ամեն մի մարդու, եթէ նա չէ ուզում ստանալ անուանվել: Այսպիսի չը լաված գիտ անհետ համար՝ պէտք է որ դուք ինքնակա սովորութիւն ունեցած լինիք օլիմպիական բարձրութիւնից խոսելու՝ երբ հարկ էր զգում դրանով ձեր սուրը ճշմարտութեան տեղ անցկացնելու: Բայց ինչու էր ձեր կանգնումը չարիքի օրինակներին, որոնք օլիմպիական բարձրութիւնից են խոսում՝ որովհետեւ վտանգ են թէ իրանց ասածը ճշմարտութիւն է:

Ստ. Մարտիանոս

ՆԱՄԱԿ ԽՐԳԱԳՈՒԹԵԱՆ

Աղտաֆա, փետրվարի 27-ին

Կարդալով «Մշակի» 24-րդ համարում, որ հայոց Բարեգործական ընկերութեան փետրվարի 25-ին կայացած ընդհանուր ժողովում քննարկման նիւթ է եղել ընկերութեան Ախալցե-խայի ձիւղի առաջարկութիւնը՝ ընտրել նոյն ձիւղի վարչութեան նախկին նախագահ Խա-հակ Մէլիք-Հայկազեանցին պատուաւոր անդամ, աւելորդ չենք համարում այդ առիթով մի քանի խօսք ասել, իբրև Մէլիք-Հայկազեանցի գործու-նեութեան տեղեակ անձնաւորութիւններից մի-նը:

Գեո. 1894 թ. Ախալցխայի տեղական վարչու-թիւնը այդ խնդիրը սկզբունքով որոշել էր և առաջարկել տեղական ընդհանուր ժողովին, սա-կայն ընդհանուր ժողովը խնդրի ծանրակշու-թիւնն աչքի առաջ ունենալով՝ որոշեց յանձնա-րարել վարչութեանը Մէլիք-Հայկազեանցի գոր-ծունեութեան տեղեկագրերը կարդալ և ներկա-յացնել ընդհանուր ժողովին ի հայեցողութիւն: Վարչութիւնը, իր գործերից կարևոր տեղեկու-թիւններ ժողովելով՝ կազմեց այդ տեղեկագրեր և ներկայացրեց ընդհանուր ժողովին, որը իր կողմից միաձայն ընդունեց Մէլիք-Հայկազեան-ցի պատուաւոր անդամութեան խնդիրը և ո-րոշեց դիմել խորհրդին և խնդրել, որ յարգէ արժանական ընդհանուր ժողովին: Խորհուրդը, նախ քան ընդհանուր ժողովին ներկայացնելը, բարձր համարեց կարևոր լրացուցիչ տեղեկու-թիւններ ժողովել և պարզել մի քանի թիւրե-մացութիւններ: Ախալցխայի բաժինը իր կողմից խորհրդի պահանջը կատարեց և խնդրեց յարգել իր առաջարկութիւնը:

Մէլիք-Հայկազեանցի գործունեութեան մասին կազմած տեղեկագրերը ոչ թէ մտացածին է և կամ վառ երևակայութեան արգասիք, այլ ճշ-գրիտ նկարագիր է մի այնպիսի գործունեութեան, որը հիմնված է կենդանի փաստերի վրա և իրողու-թիւն է: Բաւական է քրքրել ընկերութեան Ախալ-ցխայի բաժնի գործերը, սկսած նրա հիմնադրու-թեան օրից, և ամեն մարդ կը գայ այն եզրա-կացութեան, որ Մէլիք-Հայկազեանց ընկերութեան անձուէր գործիչներից մէկն է եղել: Այդպէս է եղել նա իր ասանամեայ գործունեութեամբ Ա-խալցխայում: Նա իրան յատուկ տոկոսու-թեամբ և կամքի ուժով շատ բան է արել Ա-խալցխայի պէս մի քաղաքում: Նա հիմնել էր գործադրութեան արհեստանոց, որտեղ մի քանի ասանակ չքաւոր ազգիկներ գործադրե-ծութիւն էին սովորում, որպէս զի ապագայում կարողանան մասով չափով իրանց ընտանիքի պէտքերը հոգալ: Նա կանգնել է գրագրան-ըն-թերացարան սեփական վառահեղ շինութեամբ, որը ընկերութեան ունեցածներից առաջինը կա-րող է համարվել: Նա ձեռնարկել էր նաև Ա-խալցխայում հիւանդանոց բանալու խնդիրն և կարևոր բանակցութիւնները սկսել էր, սակայն իրանից անկախ պատճառներով Ախալցխայի հա-մար այդ չափանոց օգտակար խնդիրը անիրա-գործելի մնաց:

Թերևս ընթերցողը կարծի, թէ Մէլիք-Հայկա-զեանց ձեռքի տակ պատրաստի փող ունէր, որի վրա և վտանգ լինելով՝ ձեռնամուխ էր լինում այդպիսի գործերին: Ասկայն մենք, որ մօտ ծա-նոթ ենք նրա գործունեութեան հետ, կանենք որ այդ հանգամանքը նրան ամենին չէր վնասեց-նում, նա, ինչ որ սկսել է անողութեամբ պա-կել է: Անշուշտ ընթերցողը կասի, որ այդ բա-նում նրան շատ է նպաստել իր հասարակական դիրքն ու ստիճանը, բայց չէ որ մեզանում

այդպիսիների թիւը շատ է քանին են Մէլիք-Հայկազեանցի պէս եղել:

Այդ խօսքերը ասելով մենք բոլորովին նպա-տակ չունենք նրա անձնական արժանաւորու-թիւնները դրուատել, որովհետեւ դա մեր նպա-տակից դուրս է, ասում ենք այն, ինչ որ արել է, ինչ որ թողել է, ինչ որ զօղում էնանքում և կենդանի վիճակում կարելի է հաստատել: Մի և նոյն ժամանակ մենք բոլորովին նպատակ չունենք յարգելի ժողովականների վրա բարոյա-կան ճնշում գործել, այլ ասում ենք ժողովի առաջ դրած խնդրի առիթով այն, ինչ որ հա-տատարեց գիտենք և ինչու համոզված ենք:

Ար. Ասաբեկեան

ՆԱՄԱԿ ԽՐԳԱԳՈՒԹԵԱՆ

Ս. Խաչ վանք, փետրվարի 24-ին

Թող տուէք «Մշակի» միջոցով յայտնել խորհ-րատականութիւն ատորձանաւոր Ա. Բ. Սերեբ-բակեանցին ինքնայօժար կամբով վանքին ժա-ռանգաւորաց զարդից մտանադարանին նուի-րած՝ 61 կտոր հայերէն ընթերցանութեան գըր-քերի համար:

Վանահայր Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի Երեմ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԵՐ

«Մշակի» այսօրվայ համարը բարկացած է թերթ ու կէսից:

Մեզ հեռագրում են, փետրվարի 29-ից Անդր-կովկասեան երկաթուղու Մարէլիսի կայարանից «Բաթումից 149 վերստի վրա, ցեխախառն հո-սանքը քանդել է ճանապարհը, և կործանել է բանուորական պահակատունը (բուսկա): Հինգ թշուառ օտ բանուորների դիակները ճնշող սպա-ւորութիւն են գործուած»:

Վաղը, կիրակի, մարտի 3-ին, նշանակված է կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ատորձան ընդհանուր ժողովը: Պէտք է կարգա-վեն ընկերութեան գործունեութեան տեղեկա-գրերը, այդգործական զարդից հաշիւը և կը կա-տարվին պաշտօնական անձերի՝ այն է փոխ-նա-խագահի, խորհրդի անդամի և քարտուղարի ընտ-րութիւնները: Զեկուցումներ կը կարգան Ա. Պե-րաւովը՝ տնայն ա գ ո ռ ծ ու թ է ա ն մասին, և Խ. Ֆիգուրովսկի՝ կը լինի մայր յաւանքի և զիտ ո ղ ու-թիւնն և ր ի մասին: Նրանք կը սկսվի ցերեկ-վայ 12 ժամին: Կարող են ներկայ լինել և կողմ-նակի անձինք:

Մեզ հաղորդում են հետևեալը.—Թիֆլիսի այ-գեգործական զարդը իւրաքանչիւր տարի ստա-նում է ն պ ա տ երկրագործութեան միջոցաւոր-թիւնից: Առաջինից մայն ամսին լրանում է այն տասնամեայ պայմանագրով, որ նշանակված էր այդ նպատի համար: Կովկասեան Գիւղա-տնտեսական ընկերութիւնը խնդրել էր, որ տարեկան նպատը շարունակվի և հետեւել տասնամեակի համար: Այժմ երկրագործութեան միջնարարութիւնից ստացվել է տեղեկութիւն, որ նպատի արվելը կը շարունակվի մինչև որ կը վճարի միջնարարը գիւղատնտեսական զարդը հիմնելու խնդիրը:

Օղեսայում սարող իտալացիները սկսել են ժողովարարութիւն իտալական Վարմի-խաչի ընկերութեան դրամական միջոցները մե-ծացնելու նպատակով, և հէնց առաջին օրերը ժողովել են չորս հարիւր բարբի: Հանգանակու-թեան նպատակն է օգնել Արխիմիտայում վնաս-ված իտալացիներին:

Վաղը, մարտի 3-ին, ցերեկվայ 12 ժամին, Կրոստօկի դահլիճում, երկրասարգ բնագէտ Վ. Լունկելիչի պէտք է կարգայ մի դասախօսութիւն «Երկրագործի մասին», աչակերանների և աչակեր-տաւիների համար: Արդենքը պէտք է յատկացն-վի էժանագին գրադարանին: Մենք յոյս ունենք, որ դասախօսութիւնը կը գրաւի բարձրագույն ուն-կի դիրքեր մեր «մտաղ» հասարակութիւնից, մանաւանդ որ նպատակն էլ՝ բարեգործական է:

Ֆինանսների միջնարարութիւնը որոշել է, որ այսուհետեւ պետական ծառայողների ուժեղները պէտք է վճարվեն կէսը թղթադրամով և կէսը օսկով:

Կառավարական բարձր հիմնարկութիւններին, «Южный Край» լրագրի տակով, ներկայացրած են նախագահի՝ նոր քաղաքապետութիւն հաստա-տելու Բաթում քաղաքում, կովկասեան հանրային ջրերը կարգադրելու և Չերնոմորեան ջրբանի վարչութիւնը կերպարանափոխելու մասին:

Թիֆլիսի նոր թատրոնի շինութիւնը, ինչպէս լսել են տեղական ուսու լրագիրները, պատրաստ կը լինի ներկայ տարվայ հոկտեմբերին, այնպէս որ առաջիկայ ձմեռային սեզոնը կը սկսվի նոր թատրոնում:

Հետեւալ լուրն ենք կարդում «Черноморский Вѣстник» լրագրում, «Թիֆլիսի վաճառական-ներից մէկի որդին, Պարիզում լինելով, օգուտ քաղեց գինեւալ Գրաքօմբրօի անուանից՝ յանցա-ւոր նպատակի համար: Նա սկսեց իրան անուա-նել կիէվի զինուորական շրջանի զորքերի հրա-մանատարի օգնական և խաղեկայութեան միջո-ցով վերցրեց զանազան տեղերից 28 հազար բուրլու թանգալին իրեղէններ: Այժմ այդ աֆե-րիսը կալանաւորված է»:

ԲԱԳՈՒԹՅՈՒՆ հեռագրում են, փետրվարի 28-ից «Новое Обозрѣние» լրագրին. «Կասպիական ըն-կերութեան նախահանգում շարուած խիւնեց և կրակ ընկա: Այրվում են Վիլսու, Չերնոմորեան-կատոնեան ընկերութեան, Մէլիքովի և Կորգանովի նախահանգները: Մարդկային մի քանի զօներ կան: Արշակ Գուկասովը վնասվեց հրդեհից և պատկած է հիւանդանոցում»:

ՂՈՒՄՅՈՒՆ մեզ գրում են. «Յունվարի 14-ից մինչև փետրվարի 14-ը Գուրայի ընթերցարանը այցելել են 962 մարդ, դրանցից 882 թուրք, 46 ուսու և 34 հայեր, այլ և մի քանի հրէաներ և վրացիներ»:

ՇՈՒՇՈՒՆ «Новое Обозрѣние» լրագրին գրում են հետևեալը: «Հայ և թուրք աղքատներին հան- ներկայացուցիչները, կամեալով որոշ համաձայ- նութիւն կայացնել ընտրութիւններին մասին, մի քանի անգամ մասնաւոր խորհրդակցական ժողովներ սարքեցին: Սակայն այդ խորհրդակ- ցութիւնները որ և է հետանք շարտարեցիցին, որովհետեւ թուրք վաճառականները այնպիսի պա- հանջներ են անում, որոնք անարդար են թէ սկզբունքի տեսակետից և թէ չեն համապա- տասխանում քաղաքային ինքնավարութեան հիմ- նական օրէնքներին: Այսպէս, օրինակ, նրանք պահանջում են, որ որոշված 40 ծայրաւորների և 8 կանխորոշների թիւ կէսը մուսուլմաններից ընտրվի, սակայն որովհետեւ Շուշու բոլոր բնա- կիչների թիւը 33,552 է, որից հայերը—20,673, իսկ թուրքերը—12,879, և որովհետեւ դրա հա- մեմատ էլ պետական քաղաքային բոլոր հար- կերի 2/3-ական մասը վճարում են հայերը, ուս- տի ինքն ըստ ինքեան հակառակ է, թէ որքան անարդար է թուրք վաճառականների պահանջը: Ուրիշ կերպ են նպտել գործի վրա թուրք բե- շարութեան հարկայնացիները, մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ, ներշնչված ար- դարութեան զգացումով, համաձայնութիւն յայտ- նեցին, որ ձայնաւորների միայն 1/3-ը լինի թուր- քերից, սակայն թուրք վաճառականները, ոգևոր- ված Գանձակի ձայնաւորների ընտրութեան օրի- նակից, մերժեցին այդ առաջարկը և այնպիսի իրանց պահանջի վրա: Այդ բաւական չէ, նրանք մտադիր են սկսեցնել և իրանց բոլոր բեկերին, համարելով նրանց հերձուածորներ իւրամից, որով- հետեւ միտ սեղանակից են լինում բրիտանեա- ների հետ: Ամօթ, հաշար ամօթ թուրք ամբ- լիսին, որ՝ քաղաքային ինքնավարութեան ստա- նալու բողոքին էլ այդքան ֆանատիկոս են և խա- ւար:

Պ. Պոլսից հեռագրում են. «Եւրոպական դե- սանտների խորհրդակցութիւնները թիւրքաց զա- րանութիւնների ժամանակ Հայաստանում պատ- ճառած վնասների առիթով՝ ոչինչ որոշ հետեանք- ներ չունեցան: Ֆրանսիան պահանջում է բացի իր հպատակների կրած վնասի վարձատրութիւ- նից, նոյնպէս և վարձատրութիւն այն վնասների համար, որ ունեցաւ ֆրանսիական աւետուրը Հայաստանում տեղի ունեցած անցքերի պատ- ճառով: Նոյնը պահանջում է և Անգլիան. Գեր- մանիան պահանջում է միայն վարձատրութիւն իր հպատակների գոյքի կորստի համար: Ռու- սաստանը մինչև այժմ դեռ. ևս չէ արել իր պահանջները: Խոստովան և աւետրական կառա- վարութիւնները նոյն հայեացքն ունեն, ինչ որ Գերմանիան:

Լօնդօնից «Times» լրագրին հաղորդում են, որ սուրբանոց Լօնդօնի օսմանեան դեսպանի միջոցով բոլոր ուղարկեց լորդ Սուրբիւրին հայկական օղէրայի ներկայացման դեմ Շէֆտսբուրիի թատրոնում, որ նշանակված է արդիւ ամսին: Անգլիական գործակալը, որ եկել էր Կ. Պոլիս իրաւունք ձեռք բերելու այդ օղէ- րայի ներկայացման համար, նոյնպէս և հայկական գործակալը, որի հետ նա յարաբերութիւններ սկսեց, ձերբակալեցին և արձակեցին այն պայմանով, որ նրանք կոչնչացնեն կապված պայմանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 20-ին անգլիական պարլամենտը

որոշում կայացրեց՝ առիական Թիւրքայի բրի- տանեայ ազգաբնակչութեան վիճակի բարեօրնան մասին Այդ խնդիրը արծարծեց պատգամաւոր Սամուէլ Սիտ, որ յայտնեց, թէ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել հայերի վիճակը թեթե- ւացնելու համար և այնպէս, որ Անգլիան չէ կա- րող անտարբեր հանդիսատես լինել թէ ինչպէս հայերին յարգաբար ցնջում են: Այս առաջար- կը պաշտպանեցին Կօննէվէյ և Գրիմ պատգամա- ւորները, որոնք այն համոզմունքը յայտնեցին, որ եթէ Անգլիայի համար անհարին է հարկա- դրել օսմանեան կառավարութիւնը՝ իրագործել կարեւոր թէֆօրմները, գոնէ նա պէտք է բացար- ձակ յայտնի, թէ մի կառավարութիւն, որ թոյ- րատրում է այսպիսի շարագործութիւններ, եր- բէք չէ կարող յոյս դնել իր աշակցութեան վրա:

Կառավարութեան կողմից պատասխանեց Կէր- ղօն: Նա յայտնեց, թէ կառավարութիւնը ըն- դունում է Սիտի առաջարկած որոշումը, բայց այն պայմանով, թէ հայերի օգուտ անհրաժեշտ միջոցներ գործ դնելու: Խօսքով չէ պէտք է հասկանալ զինուորված միջամտութիւն: Գրանից յետոյ Կէրղօն լուսարանեց այն դիրքը, որը սկզբից բռնել էր Սուրբիւրիի կառավարութիւնը Հայաստանի մէջ թէֆօրմներ մտցնելու խնդրում: Կէրղօնի ասելով, լորդ Սուրբիւրին հէնց սկզբից համոզվեց (?), թէ այդ խնդրի լուծման համար բաւական չէ միայն Ռուսաստանի և Ֆրանսիայի աջակցութիւնը: Գրա համար նա աշխատում էր եւրօպական համերաշխ գործողութիւն ստեղծել, բայց այդ դժուար եղաւ (?), որովհետեւ Աւստրո- Ռուսարիան հէնց սկզբից պահանջեց, որ ամեն բան կատարվի սուլթանի միջոցով և ոչ մի բան չը կատարվի նրա կամքին հակառակ, իսկ Ռու- սաստանը խորհուրդ տուեց ժամանակ տալ և թողնել, որ հանդարտվի առիական նախագիտե- րում տիրապետող յուզմունքը և սպասել սուլ- թանի խոստացած թէֆօրմների հետեանքներին: Այդ բոլորը ի նկատի ունենալով, Անգլիայի կող- մից որ և է վճարական գործողութիւն անսակ- ատութիւն կը լինէր, որովհետեւ նա կարող էր ստատակացնել թիւրքաց բրիտանեաների աղէ- ները և առաջ բերել Եւրօպական պատերազմի վտանգ: Յամենայն դէպս, աւելացրեց Կէրղօն, կառավարութիւնը չը պէտք է դադարի հարա- ւոր եղածն անել հայերի վիճակն ամբողջու հա- մար: Գրանից յետոյ Սիտի առաջարկած որո- շումը ընդունվեց առանց բուէարկութեան:

Կ. Պոլսից հեռագրում են «Berliner Local An- zeiger» լրագրին, որ թիւրքաց կառավարութիւնը զիտաւորութիւն ունի Փոքր-Ասիայից քել (1) բոլոր անգլիացի և ամերիկացի ինժեներներին:

Կ. Պոլսից հաղորդում են. «Եւրօպական դե- սանտների խորհրդակցութիւնները թիւրքաց զա- րանութիւնների ժամանակ Հայաստանում պատ- ճառած վնասների առիթով՝ ոչինչ որոշ հետեանք- ներ չունեցան: Ֆրանսիան պահանջում է բացի իր հպատակների կրած վնասի վարձատրութիւ- նից, նոյնպէս և վարձատրութիւն այն վնասների համար, որ ունեցաւ ֆրանսիական աւետուրը Հայաստանում տեղի ունեցած անցքերի պատ- ճառով: Նոյնը պահանջում է և Անգլիան. Գեր- մանիան պահանջում է միայն վարձատրութիւն իր հպատակների գոյքի կորստի համար: Ռու- սաստանը մինչև այժմ դեռ. ևս չէ արել իր պահանջները: Խոստովան և աւետրական կառա- վարութիւնները նոյն հայեացքն ունեն, ինչ որ Գերմանիան:

Լօնդօնից «Times» լրագրին հաղորդում են, որ սուրբանոց Լօնդօնի օսմանեան դեսպանի միջոցով բոլոր ուղարկեց լորդ Սուրբիւրին հայկական օղէրայի ներկայացման դեմ Շէֆտսբուրիի թատրոնում, որ նշանակված է արդիւ ամսին: Անգլիական գործակալը, որ եկել էր Կ. Պոլիս իրաւունք ձեռք բերելու այդ օղէ- րայի ներկայացման համար, նոյնպէս և հայկական գործակալը, որի հետ նա յարաբերութիւններ սկսեց, ձերբակալեցին և արձակեցին այն պայմանով, որ նրանք կոչնչացնեն կապված պայմանը:



ՀՐԱԻԷՐ ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳԱՄ

Կիրակի օր, մարտի 3-ին, առաւօտեան ժամը 11-ին Տափի թաղի (Քամոյեանց) ս. Գէորգ եկեղեցու մեծապատիւ ծխականները Հրաւիրուած են յիշեալ եկեղեցին, սուրբ պատարագից յետոյ, ծխականներէն ժողով կազմելու, ուր քննվելու են հետեւեալ հարցերը՝

- ա) Եկեղեցու օժանդակութեամբ պահպանվող Ծառուեցուց եկեղեցու գաւթուած գանձված ազգայնոց դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար պատգամաւորների ընտրութիւն:
- բ) Քանաչայացուի ընտրութիւն հանգուցեալ Սարգիս ք. Բէգ-Նազարեանցի փոխարէն (որ միայն իր ծխականներն են պարտաւոր ընտրելու): Այս անգամ ընտրութիւնը կայանալու է չը նայելով ծխականների թիւի որքանութեանը. առանձին հրահրատուներ չեն բաժանվելու, ուստի մեծապատիւ ծխականները ներքոյ յիշատակեալ կանոնադրութեան յօդուածները պէտք է առնեն ի նկատի:

ՅՕԳ. 10. Յանդակոց իւրաքանչիւր անըաման գերդաստանի ընդ արական սեռի առաջագոյն միայն մասնակցի, հասակաւ ոչ պակաս 25 ամաց. իսկ եթէ առաջագոյնն չը կարէ մասնակցել՝ մասնակցէ մինչ ամբողջ աման, որ չիցէ պակաս քան 25 ամ:

ՅՕԳ. 11. Ի ցուցակ ընտրողաց մարթէ մուծանել զայնպիսիս և եթ ի նորեկ ծխականաց, որք զէթ զամ մի եղեալ են ծախ միայ եկեղեցու:

ՅՕԳ. 13. Եթէ ծխականը տեղափոխին ըստ ընտրութեան հոգեւոր իշխանութեան, այլ ոչ ըստ խնդրանաց իւրեանց, յայն զէսս նորա մուծանին անշտաղ ի ցուցակ և վայելեն զնախկին իրաւունս ընտրողաց:

Գործակալ եկեղեցեաց Տիմիտի Գևորգ ա. ք. ԽԱՐԱԶԱՆՑ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵՂՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի զի- սուլթիւն ընկերութեան անդամներին, որ կիրակի, մարտի 3-ին, երեկոյեան ժամը ու- ղիշ 7-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում կը կայանայ անցեալ ընդհանուր ժողովի նիստի շարունակութիւնը: (№ 25) 1—2

**ՊԵՐՄԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՊՕԺԷՎՍԿԻ**  
**ԵՐԿԱՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ և ՄԷՔԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ**  
**ԱԼԷՔՍԱՆԴԵՐ ՎՍԷՎՈԼՈՎՈՎԻՉ**  
**ՎՍԷՎՈԼՈՎՈՎՍԿԻ**

ԱՍՏՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՎԱՃԱՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ ՊՕԺԷՎՍԿԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԾԻՆՎՈՂ

**ՏԱՆԻՔՆԵՐ ԾԱԾԿԵԼՈՒ ԵՐԿԱԹԷ ԹԻԹԵՂՆԵՐ**

Բարձր յատկութեան, կալուզ, տանիքների համար անփոխարինելի. ներքը սինդ կաշու է, որի պատճառով ոչ ոչ է պէտք լինում ներկել և երկաթը շատ երկար է դիմանում: Տանիքի երկաթէ թիթեղները, երկարութիւնը 2 արշին և լայնութիւնը 1 արշին, Ատորախանում, պահեստում ծախվում է ՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

5 պուզանոց կապոցը պարունակում է	Գինն է	5 պուզանոց կապոցը պարունակում է	Գինն է	5 պուզանոց կապոցը պարունակում է	Գինն է
1-ին տեսակի	պուզը	2-րդ տեսակի	պուզը	3-րդ տեսակի	պուզը
26 թերթ . . .	2 ր. 85 Կ.	27 թերթ . . .	2 ր. 80 Կ.	27 թերթ . . .	2 ր. 40 Կ.
25 թերթ . . .	2 ր. 80 Կ.	26 թերթ . . .	2 ր. 75 Կ.	26 թերթ . . .	2 ր. 35 Կ.
24 թերթ . . .	2 ր. 75 Կ.	25 թերթ . . .	2 ր. 70 Կ.	25 թերթ . . .	2 ր. 30 Կ.
23 թերթ . . .	2 ր. 70 Կ.	24 թերթ . . .	2 ր. 65 Կ.	24 թերթ . . .	2 ր. 25 Կ.
22 թերթ . . .	2 ր. 65 Կ.	23 թերթ . . .	2 ր. 60 Կ.	23 թերթ . . .	2 ր. 20 Կ.
21 թերթ . . .	2 ր. 60 Կ.	22 թերթ . . .	2 ր. 55 Կ.	22 թերթ . . .	2 ր. 15 Կ.
20 թերթ . . .	2 ր. 55 Կ.	21 թերթ . . .	2 ր. 50 Կ.	21 թերթ . . .	2 ր. 10 Կ.
19 թերթ . . .	2 ր. 50 Կ.	20 թերթ . . .	2 ր. 45 Կ.	20 թերթ . . .	2 ր. 5 Կ.
18 թերթ . . .	2 ր. 45 Կ.	19 թերթ . . .	2 ր. 40 Կ.	19 թերթ . . .	2 ր. 0 Կ.
17 թերթ . . .	2 ր. 40 Կ.	18 թերթ . . .	2 ր. 35 Կ.	18 թերթ . . .	2 ր. 0 Կ.
16 թերթ . . .	2 ր. 35 Կ.	17 թերթ . . .	2 ր. 30 Կ.	17 թերթ . . .	2 ր. 0 Կ.
15 թերթ . . .	2 ր. 30 Կ.	16 թերթ . . .	2 ր. 25 Կ.	16 թերթ . . .	2 ր. 0 Կ.
14 թերթ . . .	2 ր. 25 Կ.	15 թերթ . . .	2 ր. 20 Կ.	15 թերթ . . .	2 ր. 0 Կ.
13 թերթ . . .	2 ր. 20 Կ.	14 թերթ . . .	2 ր. 15 Կ.	14 թերթ . . .	2 ր. 0 Կ.
12 թերթ . . .	2 ր. 15 Կ.	13 թերթ . . .	2 ր. 10 Կ.	13 թերթ . . .	2 ր. 0 Կ.

**ԳՈՅԼՆԵՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՆՐ ԻՐԵՐԻ ՀԱՄԱՐ (ՍԱՂԱԹ)**

5 պուզանոց կապոցը պարունակում է	Գինն է	5 պուզանոց կապոցը պարունակում է	Գինն է	Թերթերի չափը	Գինն է
4-րդ տեսակի	պուզը	5-րդ տեսակի	պուզը	1 արշինանոց . . .	1 ր. 70 Կ.
28 թերթ . . .	2 ր. 15 Կ.			3 ըստարգանոց . . .	1 ր. 60 Կ.
25 թերթ . . .	2 ր. 10 Կ.			2 ըստարգանոց . . .	1 ր. 50 Կ.
24 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
23 թերթ . . .	2 ր. 10 Կ.	Կապոցի մէջ խառն 13-ից մինչև 28 թերթ	1 ր. 80 Կ.	Կտորներ.	
22 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
21 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
20 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
19 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
18 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
17 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
16 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
15 թերթ . . .	2 ր. 10 Կ.				
14 թերթ . . .	2 ր. 10 Կ.			4 վերջականոց . . .	1 ր. 40 Կ.
13 թերթ . . .	2 ր. 10 Կ.			1 վերջականոց . . .	1 ր. 30 Կ.

Օտարաբարացի գնորդներից պատէրը և փողը ստանալուց յետոյ, երկաթը ուղարկվում է անմիջապէս ցոյց տուած հասցեով: Որտեղ կան փոխարկական և չափանաչային գրասենականներ և երկաթուղիներ. երկաթը կարող է ուղարկվել վեքա զիբ վճարով, բայց միայն այն ժամանակ, երբ գնորդներից ստացվի կանխավճար ոչ պակաս 10%: Երկաթը ուղարկվում է գնորդների հաշուով և պատահանառութեամբ, ոչ պակաս 5 պուզանոց կապոցից: Պահեստը գտնվում է ԱՍՏՐԱԿԱՆՈՒՄ, Большая Демидовская ул. в Агарян. ряду, городской корпусъ, № 6-й. Գրասր պահանջները ուղղել այս հասցեով: доверенному Пожескихъ заводу А. В. Всеволожскаго Александру Михайловичу Соронину, в г. Астрахань, Старо Мултановская улица, д. П. А. Мольнова, около Пешеходнаго моста через р. Кутумъ. Հասցէ հեռագրիների համար՝ Астрахань, Соронину. Պատուէրներով երկաթը կուղարկվի անմիջապէս

1—1

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Բ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ա Ի Ա Գ Ը  
Հրաւիրում է Թիֆլիսի առաջին և երկրորդ կարգի սպ. վաճառականներին ներկայ լինել

**ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ**

որը տեղի պիտի ունենայ կիրակի օր, մարտի 3-ին, առաւօտեան 11 1/2 ժամին քաղաքային դումայի դահլիճում: Պարագմունքի առարկաներն են՝ 1) ՔՆՆՈՒԹԻՆ 1895 թ-ի ԵԼՔԻ ՈՒ ՄՈՒՏՔԻ ՀԱՇԻՒՆԵՐԻ, և ուրիշ գործերի, որոնք վերաբերում են առևարականներին. 2) ԸՆՏՐՈՒԹԻՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԱՌԱԳԻ ԵՒ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻ, 1896 թ-ի համար:

1—1



**ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԲԻՍՊՈՒՏՄԱՆԻ**

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱՍՅԻՆ ԶԼԹ, սմախները պնդացնելու կազմակերպչու և սեղանելու համար: Նա պահպանում է սմախները ճարճելուց և նպատակում է նրանց կանոնաւոր ածան: Արուակի ԳԻՆԸ՝ 60 Կ. 1 ր. 40 Կ. 2 ր. 1 ր.

ԿԱՇՈՒԻ ՕՍՄԱՆԵԼԻԲ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խնամութիւնից և բորբոսումից, չիւում է նրան անխախտանելի և ձկուն. այս օժանդակը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կոշիկների, չափուների, սանձերի, ձիի սարքի, չէմօզանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:

ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՈՒՆ (յատկապէս սպիտակ կաշուց չիւում թմբերի համար): Գործ է անվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:

Ծախվում է զեղարարական և կաշեղիկի սպորանքների խնամութեամբ: Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ զեղարարական սպորանքների կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

(№ 22) 2—50

**ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԲԻՍՊՈՒՏՄԱՆԻ**

(Տնային կարիքների համար)

ՊՈԼԻՏՐՈՒՄ «ԿԱՅՏՄԱՆ»: Մի քանի բույրեւոր նորոգում է հին, անհորհ, խաղաղած կահկարասիքը, սիւնինսօ, բոյալներ, հայելիի և ուրիշ շքանակներ, արկղիկներ, տիկիներ և այլ յղկած վայելեալ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեամբ: ԳԻՆԸ՝ 1 ր.:

ՏՕԿԱՅԵՆ ԲԱԼԶԱՄ—միջոց օտքի կոշտերից (մօզոլների), երունքներից և կաշուէ այլ ուռուցքներից: «Տօկայեան բաղամբ» առողջացնում է օտի կոշտերը, երունքները և այլն, ամենակարճ ժամանակում, արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ոչինչ ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կոպ.:

Ծախվում է զեղարարական խնամութեամբ: ԳԼԽԱՆՈՐ ՎԱՏԵՍՈՐ Բարձրագոյն հաստատված զեղարարական սպորանքների կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

(№ 22) 2—50

**Հ Ա Յ Գ Ո Ր Ծ Ի Չ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ը**

Լուսանկար Տէր-Ղևնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝ Հոգեբանական. հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԵՍ Վ, ԳԵՈՐԳ Վ, ՄԱԿԱՐ և ՄԿԲՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՐԻՍ ԱԼԷՔՍԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԵՆՍ ՊԱՏՐԻԱՐԿ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍԱԿԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՒՐԱԿԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԳԷՍԻ և ուրիշ արժանաւոր հոգեբանականների:

Նոյն տեղի վաճառվում են. —ԳՐԻԳՐ ԱՐՄԻՆՈՒՆԻ, ՐԱՅՖԻԻ, ՌԱՅԱՅԵԼ ՊԱՏՐԻԱՆԻ, ՆԵՐՍԵՍԻ, ԱՏԵՓԱՆԵՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ, Յ. ՊԱՐՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄՅԱՆԻ (ըստ զերբերում նկարված), ԽՄԲԱԿԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՆԻՍ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԿԱՍ ՄԷԼԻԻ-ԱՂԱՍՄԱՆԻ-ԱՐՄԻՆՈՒՆԻ, «ՄԵԱԿԻ» ԱՇԽԱՏԱՎԻՅՆԵՐԻ յօրեկանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերջինեալ պատկերները արժեն՝ մեծազիր 3 բուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏՐԻԱՆԵՐԸ 1 բուբլի, ԿԱԲԻՆԵՏԱՅԻՆ կուլված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻՋԻՏ կուլված պատկերները՝ 20 կոպէկ:

Հասցէ՝ ТИФЛИСЬ, Фотография Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Հանապարհաժախը գտողի վրա է:

(№ 117) 6—10

**ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ**

Մեծ պահանջը և ահազին հոչակը մեր հնարած


ԾԱՂԿԵԱՅ ՕՂԻՎՈԼՈՆԻ  
ԳԼԻՅԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՈՒՆ ԿԱՐՆԵՐՈՎ  
ԳԼԻՅԵՐԻՆԵԱՆ ՓՈՇԻՆ

ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍՊԱԿՆԵՆ ԵՆԱՍՄԱՆԻ ԵՒ ԲԵՋԵՄԱՅԻ ԾԱՂԿԵՆԵՐԻՅ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՎԻԿՆԵՐ և այլն

ստիպում է մեզ հետ միջոցներին ՆՄԱՆԵՑՆԵԼ ոչ միայն անունները, այլ և մեր մասնագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի զբանով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնների վաճառումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան գնորդներին, մեր արդիւնները գնելու ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնել Ֆիրմայի և գործարանական մարկայի վրա:

Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

11—12 (№ 73—ա.մ. 25) **ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.**



Մ. Լ. Ժ Ի Ր Մ Ո Ւ Ն Ս Կ Ո Ւ  
Ծախվում է 40 կոպէկով

Գերագործական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում:

(№ 22) 30—30